ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԳԻՏՆԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐԺԸ
(Գառնիկ Շախկյանի 75 տարին)

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանն իր 50-ամյա գիտամանկավարժական և պրակտիկ գործունեությամբ նշանակալից ներդրում է կատարել հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման, մասնագիտական կադրերի պատրաստման, ճարտարապետական նախագծման բնագավառներում: Իր մեկուկես տասնյակ գրքերում և մենագրություններում, 250-ից ավելի գիտական հոդվածներում բարձրացնում և լուսաբանում է արդի ու միջնադարյան ճարտարապետության կարևոր խնդիրներ, որոնք, որպես կանոն, ավելի վաղ կամ չեն արծարծվել, կամ էլ արծարծվել են ոչ բավարար մակարդակով: Դրանք վերաբերում են հայ ճարտարապետության պատմատեսական հիմնահարցերին, ճարտարապետական կառույցների հորինվածքին, մշակութային ժառանգության արժեքավորմանը, հուշարձանների պահպանությանն ու վերականգնմանը, երկրի սոցիալական զարգացման գործում ճարտարապետական արժեքների կարևորմանը, մայրաքաղաքի զարգացմանն ու կառուցապատմանը, ժամանակակից եկեղեցաշինության արդիականացմանը, բնապահպանությանը և այլն:



Ամուր կապված լինելով հայրենի բնաշխարհի հետ՝ Գ. Շախկյանի հետազոտություններում կարևոր տեղ են զբաղեցնում Լոռու ճարտարապետությունը և մշակույթը, որի դրսևորումներից են «Լոռի. պատմության քարակերտ էջերը» (1986 թ.), «Օձունի եկեղեցին» (1983 թ.), «Հաղպատավանք» (2009 թ.) մենագրությունները և հոդվածներից շատերը: Դրանցում Լոռու հուշարձանները, որոնց մի մասն առաջին անգամ է ներկայացվում մասնագիտական գրականության մեջ, քննվում են պատմահամեմատական հարուստ նյութի, ուշագրավ զուգադրումների և աղերսների շրջանակում, բացահայտվում են դրանց առանձնահատկություններն ու կրած փոփոխությունները:

Պատմաաշխարհագրական պայմանների բերմամբ XII–XIV դարերում հայ-վրացական ճարտարապետական մերձությունն ամենից ակնհայտ արտահայտվում է Լոռու հուշարձանների (Ախթալա, Քոբայր, Հնեվանք, Բգավոր) օրինակով: Եվ պատահական չէ հայ-վրացական ճարտարապետական կապերի բացահայտման խնդրին տրված կարևորությունը, որի շահեկան քննարկումը՝ իր ողջ խորությամբ և հիմնավորվածությամբ, «Լոռի. Պատմության քարակերտ

էջերը» աշխատության կարևոր արժանիքներից է:

Հատկապես օտարներին հայ ճարտարապետությունը ներկայացնելու առումով կարևոր է Գ. Շախկյանի «Խորհրդային Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» (1989 թ.) եռալեզվյան տեքստով, հարուստ պատկերագրությամբ աշխատությունը, որում ժամանակագրական ուշագրավ անցումներով ու պատկերավոր բնութագրումներով հառնում են մեկը մյուսից շքեղ, առինքնող հուշարձաններ և հուշարձանախմբեր՝ իրենց ողջ հմայքով ու կատարելությամբ:

Հայ ճարտարապետությանը նվիրված հանրամատչելի ոչ մեծաթիվ ստեղծագործությունների շարքը լրացնում է Գ. Շախկյանի «Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքներ» (2001 թ.) աշխատությունը, որում ներկայացված են հայ ճարտարապետության առավել նշանակալից՝ պայմանականորեն «հրաշալիք» ճանաչված յոթ հուշարձաններն՝ իրենց առանձնահատկություններով, ազգային նկարագրով, հայ ճարտարապետության մեջ և համաշխարհային մշակույթի գանձարանում ունեցած տեղով:

«Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII–IX դարերում» (2004 թ.) մենագրության մեջ հեղինակը փաստավավերական լայն նյութի ներառմամբ, համոզիչ կռվաններով հիմնավորում է, որ VIII–IX դարերում, չնայած Արաբական խալիֆայության հարկային ծանր քաղաքականությանը և նյութատնտեսական հիմքի նեղացմանը, Հայաստանում շինարարական կյանքը չի դադարել, ինչպես ավանդաբար ներկայացվում է մասնագիտական գրականության մեջ: Ցույց է տրվում, որ այդ դարերն ընդգրկող ժամանակաշրջանը վաղ միջնադարը զարգացած միջնադարի հետ շինարարական տեսակետից կապող անցումային փուլ է (ոչ միայն ժամանակագրական, այլև ինչ-որ չափով հորինվածքային առումով) ու կարևոր նշանակություն է ունեցել վաղմիջնադարյան կառուցողական ավանդույթների և ստեղծագործական նկարագրի պահպանման համար:

Գ. Շախկյանի մասնագիտական աշխատությունների գլուխգործոցը կամ, ինչպես հեղինակն է անվանում, իր «ստեղծագործությունների պսակը» «Ոգի, Գույն, Կերպար» (2009 թ.) աշխատությունն է: Դրանում առանձին բաժիններ են նվիրված ճարտարապետական կառույցներին, ճարտարապետության պատմատեսական հարցերին, ոլորտի մտահոգիչ խնդիրներին, ճարտարապետության գործիչներին, ուսուցիչներին: Մենագրության յուրաքանչյուր բաժին կուռ, լիարյուն կառուցվածքով ավարտուն, ամբողջական համանվագ է՝ ներկայացված մասնագիտական խորությամբ, պատկերավոր խոսքով, գեղարվեստական կերպավորմամբ: Հանրահայտ ճշմարտություն է, որ կարևոր է ոչ միայն մշակութային արժեքների ստեղծումը, այլև այդ արժեքների իմացությունը, դրանք սեփական ժողովրդին և ուրիշներին ներկայացնելը, ինչն առավել անհրաժեշտ է մեզ՝ հայերիս, որ աշխարհի շատ վայրերում ենք ստեղծել արժեքներ, որոնցից շատերն այսօր վերացել են կամ վերացման, ուծացման վտանգի տակ են:

Հայաստանում ճարտարապետական-շինարարական բարձրագույն կրթության 80-ամյա ուղուն է նվիրված «Երևանի ճարտարապետության և շինարարության

պետական համալսարան» (2003 թ.) գիրքը (համահեղինակ՝ Ա. Բեգլարյան), որում հանգամանալից ներկայացված է արգասաբեր այն ուղին, որով անցել է, բարձր զարգացում ապրել և նշանակալից հաջողությունների հասել հայկական ճարտարապետական-շինարարական դպրոցը:

Լոռու բնաշխարհի և նրա մարդկանց գործունեության համապարփակ հետազոտության հանրագումարն են «Կայծոն-Շնող» (1999 թ.) և «Պատկերազարդ կենսագրական» (2004 թ.) կոչվող հանրագիտարանները, որոնք ունեն լայն, բազմակողմ ընդգրկում, իրենց տեսակի մեջ յուրահատուկ են՝ գիտաճանաչողական և իմացաբանական բարձր արժեքով:

Մի առիթով Գ. Շախկյանը գրել է. «Երկար տարիներ զբաղվելով Լոռու ճարտարապետական դպրոցի հուշարձանների և մշակույթի ուսումնասիրությամբ, ավելի ընդհուպ մոտեցա Հովհ. Թումանյանին, ճանաչելով նրան ոչ միայն որպես Ամենայն հայոց բանաստեղծ, հասարակական գործիչ, այլև Մարդ, որ շոշափելի հետք է թողել նաև մշակույթի ամենատարբեր ոլորտներում, այդ թվում՝ հայրենագիտության բնագավառում»: Եվ ծնվեց Գ. Շախկյանի կարևոր աշխատություններից մեկը՝ «Հովհաննես Թումանյան. Հայրենագիտական համանվագներ» (2005 թ.) խորագրով: Դրանում բացահայտվում են մեծ գրողի հայրենագիտական շերտագրությունները, ներշնչանքը, սերը հայրենի բնաշխարհի նյութական և ոգեղեն գանձերի հանդեպ, որոնք կազմել են գրողի էության մասը, գործունեության ուղեկիցը՝ դառնալով ստեղծագործական պոռթկումների և հայրենասիրական դրսևորումների հորդահոս աղբյուր: Թումանյանական շերտագրություններն ունեն տարբեր ուղղվածություն՝ բնաաշխարհագրական-տեղագրական, պատմական-տոհմաբանական, բանահյուսական-լեզվագրական, ճարտարապետական-հնագիտական և այլն: Հեղինակը նորովի մոտեցում է ցուցաբերում՝ Դսեղի հուշարձանները քննելով Թումանյանի հետ երկխոսության ճանապարհով: «Համանվագներ»-ի շարունակությունն է կազմում «Թումանյանի ընտանեկան աշխարհը» (2011 թ.) գիրքը՝:

Նկատենք, Գ. Շախկյանի աշխատություններից շատերը ծառայում են որպես ճարտարապետության և մշակույթի գծով դասագիրք, նաև ուսումնական ձեռնարկ, որոնցով սովորել են ուսանողների մի քանի սերունդ:

Գ. Շախկյանը ճարտարապետության գրքերի Սոֆիայի «Բիենալե–91» համաշխարհային ստուգատեսի մրցանակակիր է (1991 թ.), ճարտարապետական գիտության բնագավառում ակնառու ներդրման համար 2011-ին արժանացել է ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակի դափնեկրի կոչման:

Գ. Շախկյանը 1978 թ. դասավանդում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, 1989-ից՝ Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, 1994-ից պրոֆեսոր է: Որպես հեղինակ և խմբագիր՝ ակտիվորեն աշխատակցում է Հայկական հանրագիտարանի հրատարակություններին:

Ճարտարապետ գիտական-մանկավարժը նախագծել է 25-ից ավելի հասարակական և բնակելի-քաղաքացիական շենքեր, կառույցներ (Արմավիր և Մարտունի քաղաքների հյուրանոցներ, Գրողների ստեղծագործական տունը և մանկական ճամբար Ծաղկաձորում, Ալավերդու քաղաքապետարանի վարչական շենքը, բնակելի-կոմունալ օբյեկտներ, հուշակառույցներ):

Իր գործունեության ընթացքում Գ. Շախկյանն աչքի է ընկել մասնագիտական հմտությամբ, կազմակերպչական, նախաձեռնող հատկանիշներով, սկզբունքայնությամբ, հայրենասիրությամբ: Նորի և կատարյալի որոնումները, գեղարվեստականության ու կառուցիկության բացահայտումները, կարծիքների և եզրահանգումների փաստարկվածությունը, քննական-վերլուծական մոտեցումները Գառնիկ Շախկյանի հետազոտական գործունեության հիմնական հատկանիշներն են, որոնք, կարծում ենք, նոր դրսևորումներ կունենան արգասաբեր և ուսանելի ճանապարհ անցած գիտական-մանկավարժի հետագա գործերում:

ՍԱՐԳԻՍ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԻԼԻԱ ՄԱՇԻՆՅԱՆ